

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՏԻԿԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

Մայիսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վատիկան Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապի հրավերով:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության կազմում են քսան եպիսկոպոսներ, ինչպես նաև Վատիկանում հայրապետական պատվիրակությանը միացան յոթանասունհինգ ազգային բարերարներ և ավյուրքահայ ճանաչված գործիչներ աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու տարբեր թեմերից:

Այս այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում են հետևյալ հոգևորականները՝ Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Ադան արքեպս. Պալիոզյանը, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նորվան արքեպս. Զաքարյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ս. Ավագ արքեպս. Ասատուրյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արցախի թեմի առաջնորդ Ս. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպս. Տերտերյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Գարեգին արքեպս. Բեքչյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Վաշինգտոնի թեմական պատվիրակ Ս. Վիզեն արքեպս. Այբազյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Ս. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ արքեպս. Կճոյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքության լուսարարապետ Ս. Նուրհան արքեպս. Մանուկյանը, Թուրքիայի հայոց պատրիարքության լուսարարապետ Ս. Արամ արքեպս. Աթեշյանը, Մայր աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Ս. Փառեն եպս. Ավետիքյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպս. Ներսիսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Ս. Արշակ եպս. Խաչատրյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպս. Միրզախանյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Ս. Բագրատ եպս. Գալստանյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Աշոտ եպս. Մնացականյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Արմաշ եպս. Նալբանդյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Առեն վրդ. Շահենյանը, Վեհափառ Հայրապետի գավազանակիր Ս. Հովնան արքեպս. Հակոբյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օտարալեզու լրատվության պատասխանատու Ս. Կորիճ քին. Դևեշյանը:

Այս ուղևորման լուսաբանման համար հայրապետական շքախմբին մաս են կազմում նաև Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արա Գոչունյանը և «Շողակաթ» հեռուստաընկերության օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը:

Հայրապետական այս այցելության կազմակերպական կարգադիր հանձնախմբի պատասխանատուն է Միլանի հայ եկեղեցական վարչության ատենապետ Մարո Խուրավերդյանը:

**Վեցը մայիսի** - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմ ժա-



ԳԻՄՆԱԳԱՐՈՐԻՑԻՆ ՀՈՒՍԻՆ «ՇԱՄՈՒՆԻՆ» ՕՐԱՆՆԱԿԱՆԳԱՅԱՆՈՒՄ  
(Հայրապետական այս աթոռից լուսանկարները Արա Գոյունյանի)



ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ  
ՀՈՌՄԻ ՍԱԼԵՉՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ  
ՊԱՏՎԱԿՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԱՍԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԵՈՒՄ



Հովհաննէս-Թորոս Բ ՊԱՍԻ ՇԻՐԻՄ ԱՌՁԵՎ



Ա. ՊԵՏՐՈՍԻ ՏԱԶՄԻ ԻՌԵՆԱՎԱԽՈՐԾԻՄ ԶԵՏԵՂՎԱԾ Ա. ԳԻԿՈՐ ԼՈՒՍԱՎԵՐԻՉԻ ԱՐԽԵՆԻ ԱՌԶԵԼԻ

մանեց անգլիահայ բարերար Վաչե Մանուկյանի անձնական օդանավով, որը 11.35-ին վայրէջք կատարեց Իտալիայի մայրաքաղաքի «Չամպինիո» զինվորական օդանավակայանում: Նորին Սրբությունը առաջնորդվեց օդանավակայանի պատվո ընդունելությունների սրահը, ուր հանուն Հռոմեական Եկեղեցու Քահանայապետի Հայոց Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց կարդինալ Սերջիո Սեբաստիանին, ում ընկերակցում էին Բրայն Ֆարել եպիսկոպոսը, մոնսենիոր Յոհան Պոնին՝ կաթոլիկ հոգևորականների խմբով:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վրդ. Շահենյանը, ինչպես նաև Վատիկանում Հայաստանի դեսպանության ներկայացուցիչ Ջառա Մարտիրոսյանը և Իտալիա այս այցելության կարգադիր հանձնախմբի ատենապետ Մարո Խուդավերդյանը:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը օդանավակայանից պատվո պահակախմբով առաջնորդվեց պաշտոնական բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված Վատիկանի «Ս. Մարթա» հյուրանոցը:

Կեսօրին այստեղ ճաշկերույթ տրվեց ի պատիվ Նորին Սրբության և պատվիրակության անդամների, որին մասնակցեցին նաև մի խումբ կաթոլիկ հոգևորականներ:

Վեհափառ Հայրապետն իր իջևանած հյուրանոցում այնուհետև հանդիպեց Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Կասպերիին:

Հանդիպումից հետո Հայոց Հայրապետն առաջնորդվեց Առաքելական պալատ, որտեղ էլ հանդիպեց Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Բերտոնեին:

Այս երկու հանդիպումների ընթացքում, որոնք անցան ջերմ մթնոլորտում, Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը:

Երեկոյան ընթրիք տրվեց «Սուրբ Մարթա» հյուրանոցում, որին մասնակցեց նաև կարդինալ Կասպերիի գլխավորած կաթոլիկ հոգևորականների խումբը:

**Յոթը մայիսի** - Առավոտյան Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը կարդինալ Կասպերիի, Հռոմի Սուրբ Պետրոս տաճարի լուսարարապետ կարդինալ Կոմասթրիի և մի խումբ կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ առաջնորդվեց Սուրբ Պետրոսի տաճար:

Նորին Սրբությունն այստեղ նախ մի կարճ աղոթք ասաց, ապա շրջեց տաճարում՝ լինելով և՛ Պետրոս առաքյալի, և՛ Հովհաննես-Պողոս Բ պապի շիրիմների մոտ, աղոթեց Հովհաննես-Պողոս Երկրորդի հոգու հանգստության համար:

Վեհափառ Հայրապետն այնուհետև առաջնորդվեց մեր հավատո հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի արձանի մոտ, որը զետեղված է տաճարի արտաքին պատերից մեկի բացվածքում:

Ս. Գրիգոր Լուսավորչի արձանի մոտ հայրապետական շքախմբի անդամները երգեցին «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հայոց Հայրապետն ապա առաջնորդվեց Սուրբ Պետրոսի հրապարակ, որտեղ հավաքվել էին տասնյակ հազարավոր քրիստոնյաներ, ովքեր ուխտավորաբար եկել

Էին աշխարհի չորս կողմերից: Կաթոլիկ Եկեղեցում ընդունված ավանդույթով Վատիկանի գլխավոր այս հրապարակում ամեն չորեքշաբթի տեղի է ունենում հավաքական ունկնդրություն, որի ընթացքում Սրբազան Քահանայապետը հավաքվածներին է փոխանցում իր պատգամը: Մայիսի յոթի այս ունկնդրությունը թեև հերթականն էր ընդունված այս ավանդույթի շրջագծում, սակայն պայմանավորված Վեհափառ Հայրապետի այցելությամբ՝ անցավ առանձնահատուկ պայմաններում:

Հայոց Հայրապետի հետ Բենեդիկտոս ԺԶ-ի եղբայրական ողջագուրումից հետո երկու քահանայապետերը բարձրացան այն պատվանդանի վրա, որը դրված էր տաճարի մուտքի աստիճաններին:

Սրբազան Քահանայապետը ջերմորեն ողջունեց և բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին, այնուհետև պատասխան խոսքով Հռոմեական Եկեղեցու Պետին անգլերենով դիմեց Գարեգին Երկրորդը՝ սիրո, եղբայրության և խաղաղության իր պատգամները փոխանցելով հրապարակում հավաքվածներին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՈՒՂԵՐՁԸ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ  
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՊԱՊԻ ՀԵՏ  
ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

*«Յանուն Հոր և Որդույ և Հոգույն Սրբոյ. Ամէն»:*

*Գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ Իր ողորմած Կամքով և Ձերդ Սրբության սիրալիր հրավերով դարձյալ առիթն ունեցանք այցելելու պանծալի և ավանդաշատ Հռոմ՝ քրիստոնեական հնագույն ուխտավայրն ու Սուրբ Աթոռը Կաթոլիկ Եկեղեցու, և այսօր եղբայրական ողջագուրումով Ձերդ Սրբության հետ՝ վկայելու աստվածախնամ սերը Կաթոլիկ և Հայ Եկեղեցիների միջև, որ «սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. Ե 5):*

*Եկել ենք աստվածաշնչյան երկիր Հայաստանից, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ բարձրաստիճան հոգևորականների և եկեղեցանվեր ու բարեպաշտ արժանավոր զավակների հետ՝ մեր երկու Եկեղեցիների միջև եղբայրությունը և համագործակցությունը զորացնելու և ամրապնդելու համար:*

*Միբեցյալ եղբայր ի Քրիստոս, այսօր՝ Հոգեգալստյան տոնի նախաշեմին, երբ մեր աղոթքներն ենք միավորում Ձերդ Սրբության և հավատացյալ Ձեր զավակների աղոթքներին, հայոց շարականի փառաբանական խոսքերն են Մեր շուրթերին. «Հոգին, որ [Բաբելոնի] աշտարակը կառուցելու համար միավորվածներին ցրել էր լեզուների բաժանումով, ազգերի բաժանված լեզուները Սուրբ Վերնատան մեջ դարձյալ միավորեց: Հոգիներ բոլոր, օրհնաբանեցեք Հոգուն Աստծո» (Շարական, Հոգեգալստեան Գ Աւորն):*

*Մայիսյան այս պայծառ առավոտ այստեղ ենք համախմբվել աշխարհի տարբեր ծագերից և խոսում ենք աշխարհի տարբեր լեզուներով: Զանազան մշակույթներ և քաղաքակրթություններ ենք ներկայացնում, տարբեր համոզումների և գաղափարների տեր ենք՝ կյանքի ուրույն ուղիներով ու ընթացքով:*

*Երկու հազարամյակներ առաջ քրիստոնեական հավատքի օրրան Երուսաղե-*



ՄԻՈՒ ԲԱՆՈՒՅՑՆԵՐԻՆ ԵՎԻՍԿՈՍՈՍԻՆ ԳԳԳՏՊԵՆՈՒՆԻ ԳՈՒՄԵՆԻՆԻՍԻՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ՓԱՐԵԳԻՆ Բ ԱՄՆԱԾՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ԲՆՆԵՂԻԿՏՈՍ  
ԺԶ ՊԱՊԻ ՀԱՆՂԻՊՈՒՄԸ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒՆՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

մում էլ այսպես էր, երբ Վերնատանը հավաքված առաքյալները տարբեր լեզուներով խոսելու Սուրբ Հոգու շնորհը ստացան և Սուրբ Պետրոս առաքյալը քրիստոնեական հավատքի ջատագովության քարոզով դիմեց աշխարհի տարբեր ծագերից եկած և այնտեղ գտնվող մարդկանց, ովքեր Տիրոջ հավատքով լուսավորվելով՝ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաջին հավատացյալները պիտի դառնային:

Հոգեգալստյան տոնը, որ և Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հիմնադրման օրն է, ներշնչման աղբյուր է դարձել Ներսես Լամբրոնացի հայոց արքեպիսկոպոսի համար՝ հոգեգալստյան խորհմաստ խորհուրդը մեկնող փառաբանական շարական ձոնելու Սուրբ Հոգուն: Շարականագիր արքեպիսկոպոսը, որ Հայոց և Հռոմի եկեղեցիների միջև բարեկամության ակունքներում է եղել, օրհնաբանում և փառք է վերառաքում Երկնավորին, որ Աստծո Սուրբ Հոգին աղբյուր է միասնության և շնորհառատ է դարձնում համերաշխության քայլերը, որ Աստծո փառքի համար են ու բխում են Քրիստոսի սիրուց՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման և մարդու օրհնյալ կյանքի: Արդարև, մարդկության բարօրությանն ու երջանկությանը հասնելու ուղիները թեև տարբեր կարող են լինել, բայց գործությունը մեկն է, ինչպես առաքյալն է ասում՝ «գործելու զանազան կարողություններ կան, բայց նույնն է Աստված, որ գործում է ամեն բան ամենքի մեջ» (Ա Կորնթ. ԺԲ 6):

Հակառակ պատմական տարբեր փորձառությունների և անցած ուղիների, որ ունենք, հակառակ դավանական, մշակութային և աշխարհընկալման տարբերությունների, բոլորս մեկ Աստծո զավակ ենք, բոլորս եղբայրներ և քույրեր՝ Աստծո Սուրբ սիրով: Բազմազանությանց մեջ մեր սիրո միությունը մեր՝ Աստծո զավակ լինելու վավերական վկայությունն է:

Քրիստոսով սիրո և եղբայրության մեջ չպետք է տեղ գտնեն անհանդուրժողությունն ու առճակատումները, որ մարդկությանը շատ տառապանքներ են պատճառել: Այսօր էլ անհանդուրժողությունն ու առճակատումները փորձության մեջ են պահում աստվածային արարչագործությունը՝ մարդկանց և մեզ շրջապատող աշխարհը՝ միջկրոնական անհամաձայնությամբ, պատերազմներով ու ահաբեկչություններով, անտարբերության դրսևորումներով և աղքատության ու տարաբնույթ աղետների հետևանքներով:

Մեր քույրերն ու եղբայրները վշտի մեջ են Մերձավոր Արևելքում և աշխարհի բազում այլ տարածքներում, որտեղ կանայք և երեխաներ, տարեցներ և անդամալույծներ վտանգված են անհամաձայնության և բաժանումի, անարդար մրցակցության և թշնամանքի հարվածներից: Այս չէ կամքն Աստծո: Այս չէ կոչումը մեր: Բոլորիս ձգտումն է խաղաղ, ստեղծագործ և արարումի կյանքով ապրելը՝ Սուրբ Հոգուց մեզ տրված շնորհները Քրիստոսի սիրով և ավետարանական պատգամներով ծառայեցնելը միասնության և համերաշխության հաստատման համար՝ քանզի «ովքեր սիրում են Աստծուն, ամեն ինչում գործակից են լինում բարիքի համար» (Հռոմ. Ը 28):

Մենք Ցեղասպանություն վերապրած ժողովուրդ ենք: Հավատարմության համար մեր հավատքին կրել ենք վշտի և տառապանքի ծանր փորձություններ, անլուր բռնություններ ու նահատակություններ և լավ գիտենք արժեքը սիրո, եղբայրության, ժողովուրդների բարեկամության, խաղաղ ու ապահով կյանքի:

Այսօր աշխարհի շատ երկրներ 1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայում հայության դեմ գործված ոճրագործությունները ճանաչում և դատապարտում են որպես

Յեղասպանություն, ինչպես Վատիկանը՝ հանձին երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ Պապի՝ 2000 թ. Հռոմ եղբայրական Մեր այցի օրերին: Աղոթք բարձրացնելով լուսահոգի Քահանայապետի հիշատակին՝ Մենք՝ որպես Հովվապետ հայ ժողովրդի, կոչ ենք ուղղում բոլոր ազգերին ու երկրներին համընդհանուր դատապարտության արժանացնել պատմության մեջ կատարված և ներկայիս իրագործվող բոլոր ցեղասպանությունները, որպեսզի իշխանության կրողները անդրադառնան պատասխանատվությանը և հետևանքներին այն բոլոր ոճիրներին, որ գործվել և գործվում են Աստծո ստեղծագործության նկատմամբ, և որ այդ իրողությունների մերժումը նույնքան մեծ անարդարություն է, որքան իրագործումը:

Ձե՛րդ Սրբություն, սիրելի՛ քույրեր և եղբայրներ ի Քրիստոս, աղոթքի նվիրական այս պահին ի խորոց սրտի Մեր հայցն է առ Բարձրյալ Տերը, որ պատմական տարբեր պայմաններում ձևավորված մարդկային ընտանիքի մշակութային և կրոնական տարբերությունները Սուրբ Հոգու շնորհներով դառնան համընդհանուր արժեքներ բոլորիս համար: Խնդրամատույց ենք առ Տերը, որ անսասան պահի Երկիր մոլորակը ժողովուրդների համաձայնության, եղբայրության և հաշտության մեջ: Նաև աղոթում ենք առ Աստված, որ Իր բարի հայացքի ներքո պահպանի մեր երկու Եկեղեցիները անխախտ բարեկամության մեջ և Իր ամենախնամ Աջով հովանի լինի Ձերդ՝ Սրբությանը՝ աստվածօրհնյալ գահակալության երկար տարիներ պարզնելով Ձեզ՝ Ձեր տեսիլքներով ու Ձեզ բնորոշ իմաստությամբ առաջնորդելու Կաթոլիկ Եկեղեցին «Ի վայրի դավարուոջ... և առ ջուրս հանգստեան...» (Մղմ. ԻԲ 2):

**Շնորհք և սեր Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամենեսեան. Ամեն:**

Վեհափառ Հայրապետի խոսքն ընդմիջվեց հրապարակում գտնվողների բուն ծափահարությամբ, որին միացավ և Հռոմեական Եկեղեցու գահակալը:

Երբ Նորին Սրբությունն ավարտեց խոսքը, Ս. Պետրոսի հրապարակում հնչեցին հայկական շարականներ, որոնց հոգեզմայլ մեղեդիները հավաքվածներին հիշեցրին, որ այդտեղ՝ հրապարակում է գտնվում Քրիստոնեական հնագույն Եկեղեցիներից մեկի գահակալը:

Հավաքական այս ունկնդրության ընթացքում Սրբազան Քահանայապետի այս խոսքը, այդ թվում և Հայոց Հայրապետին ուղղված այս ողջույնը, թարգմանվեց յոթ լեզուներով: Անհրաժեշտ է նշել, որ այս հանդիպումը մանրամասնորեն ներկայացվեց և մեկնաբանվեց նաև զանգվածային լրատվության միջոցներով, իսկ Վատիկանի «Լը Օբսերվատորե Ռոմանո» պաշտոնական օրաթերթը հանդիպման մանրամասն նկարագրությունից բացի զետեղել էր նաև երկու քահանայապետերի ողջագուրման պահը պատկերող լուսանկարը, ինչպես նաև ելույթների անզլերեն տարբերակները իտալերեն թարգմանությամբ:

Կեսօրին պաշտոնական ճաշ տրվեց Վեհափառի իջևանած հյուրանոցում, որին դարձյալ ներկա էին կարդինալ Կասպերին, ինչպես նաև քույր Եկեղեցիների պետեր և բարձրաստիճան հոգևորականներ, որոնք ևս այդ օրերին գտնվում էին Վատիկանում:

Կեսօրին Վեհափառ Հայրապետն այցելեց Հռոմի Սալեզյան քահանայապետական համալսարան, որտեղ Նորին Սրբությանը շնորհվեց այս համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպված մեծարանքի շքեղ հանդիսությունն սկսվեց Սալեզյան համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Մարիո Տոստյի ողջույնի խոսքով: Վեհափառ Հայրապետի գործունեությունն բարձր գնահատեցին Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Բերտոնեն և Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Կասպերին: Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի տեսուչ պրոֆ. Ջորջիո Ջելվինին ներկայացրեց համալսարանի խորհրդի որոշումը Գարեգին Երկրորդին Սալեզյան համալսարանի պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին, որից հետո Նորին Սրբությանը տրվեց պատվո դոկտորի վկայականը:

Այնուհետև շնորհակալական խոսքով հանդես եկավ Հայոց Հայրապետը՝ պատմական մի անդրադարձով ներկայացնելով նաև Հայ Եկեղեցու պատմությունը և այսօրվա գործունեությունը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍԱԼԵՁՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

*Գերաշնորհ Սրբազան Հայրեր,  
Միրելի ուսանողներ և ներկաներ*

*Մեր սիրեցյալ եղբայր Բենեդիկտոս ԺԶ Պապի հրավերով Վատիկան կատարած Մեր եղբայրական այցելության շրջանակներում այս հանդիպումը ուրախությամբ է համակում Մեր հոգին:*

*Ամիսներ առաջ առիթն ունեցանք ծանոթանալու այս կրթական հաստատության նախկին ռեկտոր կարդինալ Տարչիզիո Բերտոնեի հետ, ով իբրև Վատիկանի պետական քարտուղար այցելեց Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և հանուն Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ Պապի՝ Մեզ բերեց Հոռոմ այցելելու հրավերն ու նամակը, որտեղ ջերմորեն արտահայտված էր Մեր երկու Եկեղեցիների միջև բարեկամությունն ու համագործակցությունը զորացնելու կարևորությունը:*

*Գոհություն Բարձրյալին, որ այսօր բարեպատեհ առիթն է պարզելը՝ հանդիպելու Ձեզ Սալեզյան համալսարանի հարկից ներս և խոսելու Հայ Եկեղեցու կրթական ավանդությունների, նրա այսօրվա գործունեության և առկա հրամայականների մասին այն հաստատ համոզումով, որ մեր հանդիպումը ճանաչողության գործընթացում նպաստ պիտի բերի մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների առավել սերտացմանն ու ամրապնդմանը:*

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

*Հայ Եկեղեցին հաստատված է Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների կողմից: Եկեղեցին շուրջ 250 տարի Հայաստանում հալածվում էր, ինչպես ամենուր Քրիստոնեական Եկեղեցին: 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում հռչակվում է պետական կրոն, և սկիզբ է առնում քրիստոնեական կրթության կազմակերպումը երկրի ողջ տարածքում: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ մեծ խոստովանողը Քրիստոսի և առաջին Կաթողիկոսը Հայ Եկեղեցու, Տրդատ Գ թագավորի աջակցությամբ Հայոց թագավորության բոլոր գավառներում կազմում է թեմեր,*

հաստատում վանքեր, դպրոցներ: Հինգերորդ դարի սկզբին Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի կողմից ստեղծվեցին Հայոց գրերը՝ ժողովրդին առավել մատչելի դարձնելու Աստծո անանց Խոսքը, որ մատուցվում էր հունարենից և ասորերենից թարգմանությամբ: Հայերեն թարգմանվեց Սուրբ Գրքը և «հայաբարբառ, հայրենախոս դարձան օրենսուսույց Մովսեսը՝ մարգարեական գնդի հետ և առաջադեմ Պողոսը բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին», - ինչպես հոգու խնդրությամբ պատմում է ականատես հայ պատմագիրը՝ Կորյունը, ով առաջին աշակերտներից էր հայերեն դպրոցյան: Սուրբ Գրքի հայերեն այս թարգմանությունը հետագայում անվանվել է Թագուհի թարգմանությանց:

«Ճանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակ Ա 2): Առակաց գրքի հորդորական այս միտքն է, որ առաջինը թարգմանվեց հայերեն, և Հայ Եկեղեցու մեծ ուսուցիչների՝ Սուրբ Սահակ Հայրապետի և Սուրբ Մեսրոպ վարդապետի կողմից դրվեց հայ դպրոցյան ու կրթության հիմքում՝ սերունդների համար որպես պատգամ՝ սիրելու կրթությունը, Տիրոջ Սուրբ Ավետարանը և կենսագործելու Նրա պատվիրանները:

Հինգերորդ դարում Հայաստանի գավառներում Սուրբ Սահակ Հայրապետի խնամքով և Վռամշապուհ թագավորի հոգածությամբ բացվեցին հայերեն դպրոցյամբ նոր դպրոցներ: Շուտով աշակերտները դարձան ուսուցիչներ, թարգմանիչներ, մեկնիչներ, շարականագիրներ, պատմիչներ ու իմաստասերներ: Ծնունդ էր առնում հայ մշակույթի Ոսկեդարը: Ամրագրվում և զորանում էին կրթության ավանդույթները: Հետագա դարերում որքան էլ դժվարին եղավ Հայաստանի քաղաքական իրավիճակը, որքան աղետներ տեսավ հայ ժողովուրդը, չնվազեց հայ կյանքում հոգու ձգտումը՝ ճանաչելու իմաստություն և խրատ, իմանալու հանճարի խոսքերը: Վանքերը և կից վարդապետարանները եղան հոգու դարբնոցներ, լուսավորության, մշակույթի ակունքներ՝ կրթելով Քրիստոսի հավատացյալ հոտը առաջնորդող հոգևորականներ, ավանդելով հոգևոր և գիտական հարուստ ժառանգություն:

Հայ երիտասարդները վանք-անապատներում ուսանում էին «յոթ ազատ արվեստները», որոնք բաժանվում էին երկու խմբի՝ եռյակ արվեստների և քառյակ արվեստների: Եռյակ արվեստները կազմում էին քերականությունը, ճարտասանությունը և դիալեկտիկական (տրամաբանության տեսությունը), քառյակ արվեստները՝ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը և երաժշտությունը: Հայոց հոգևոր կրթարաններում առաջատար և հիմնական առարկան աստվածաբանությունն էր, առաջնային կարևորությամբ դասավանդվում էին Հին և Նոր Կտակարանները, Սուրբ Գրոց մեկնությունը, խորհրդաբանությունը:

Վանական ավանդության բովով դաստիարակված հոգևորականները շրջում էին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք՝ քարոզելով Ավետարանը, ուսուցանելով Տիրոջ կենարար Սուրբ Խոսքը: Հայ հոգևորականները քարոզեցին և քրիստոնեական հավատքը տարածեցին նաև այլ երկրներում, որտեղ նրանց վառ հիշատակը պահպանվում է առ այսօր:

Բազմաթիվ վանքերի, միջնադարյան համալսարանների պատմությունը մեզ պատկերացում է տալիս Հայ Եկեղեցու հզոր և հարուստ կրթական ժառանգության մասին:

**ԻՐԱՎԻՃԱԿԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

1991 թվականին վերականգնվեց Հայաստանի անկախությունը պատմական Հայաստանի փոքր հատվածում: Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին առաջընթացի նոր ժամանակներ թևակոխեցին:

Անկախությունը և պետականության վերահաստատումը հայ ժողովրդի դարերի մեծագույն երազն էր: Ավելի քան 600 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը: Արդի աշխարհում՝ քաղաքական ընթացքներում, գիտության ու տեխնիկայի, հաղորդակցության արագ զարգացումներում, տնտեսական և մշակութային ժամ առ ժամ սերտացող առնչություններում հայ ժողովրդի ձգտումն է խաղաղ ու ստեղծագործ կյանքի իր հույսերն իրականություն դարձնել ամուր պետությամբ, կենսունակ սփյուռքով, ազատ և ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությամբ:

«Ձի ինձ կեանք Քրիստոս է» հավատով, հայ ժողովուրդն իր ուժերը կենտրոնացրել է՝ իրականացնելու այս ամենը: Այսօր Հայաստանն ապրում է տնտեսական և ընկերային կյանքի վերակառուցումներ, հայրենաբնակ մեր ժողովուրդը և հայությունը ողջ աշխարհում ջանում է բարգավաճ ու բարօր դարձնել Հայաստանը՝ վերածնված հոգևոր կյանքով, զարգացող մշակույթով: Հաղթահարելով դժվարություններն ու խոչընդոտները, ապավինած Աստծուն՝ մեր ժողովուրդը քայլում է դեպի իր կյանքի նոր այգաբացը՝ հուսալով իրավունքի ու արդարության նոր դարի առավուտը:

Հայաստանի անկախության առաջին տարիներին, ինչպես մասամբ այսօր, տարածաշրջանում առկա էր լարվածությունը: Երկրի շրջափակման պայմաններում առաջացած տնտեսական ճգնաժամի հետևանքով մեծ էր նաև հումանիտար աղետի վտանգը: Աճում էր գործազուրկների թիվը, որի հետևանքով էլ՝ հայրենիքից արտագաղթը: Հայաստան էին ներթափանցում նոր կրոնական-աղանդավորական շարժումներ, և քիչ չէին մարդորսության դեպքերը: Հուսադրողը մեր ժողովրդի հավատքն էր: Խորհրդային բռնապետությունը թեև ոչնչացրել էր բազմաթիվ եկեղեցիներ, հոգևորականների՝ մարդկանց զրկելով քրիստոնեական դաստիարակության հնարավորությունից, բայց ոչ երբեք հավատքից: Հինգերորդ դարի հայ նշանավոր պատմիչներից մեկը՝ Եղիշեն, իրավամբ բնութագրում է, որ հայ ժողովրդի համար քրիստոնեական հավատքը երբեք չի եղել հանդերձի պես, այլ եղել է ինչպես մարմնի գույնը, և այդ հավատքից ոչ ոք չի կարող ետ դարձնել հայոց ազգը մինչև աշխարհի վախճանը: Հայ ժողովուրդը պատմության ընթացքում անասելի հալածանքների է ենթարկվել, բայց երբեք չի ուրացել իր հավատքն ու սերն առ Քրիստոս, որը մշտապես նրան հույս և ուժ է ներշնչել՝ հարություն առնելու խաչելության Գողգոթաներից:

Պետության անկախության վերականգնումից հետո Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին լիովին նոր իրավիճակի առջև էր կանգնած՝ մի կողմից աշխարհի գլոբալ մարտահրավերներն էին, մյուս կողմից՝ ներքին մարտահրավերները Մայր Հայրենիքում: Այս պայմաններում Եկեղեցու նպատակային գործունեությունն էր առավել աշխուժացնել Ավետարանի քարոզչությունը՝ Քրիստոսի սիրով և խաղաղությամբ լցնելով մարդկանց հոգիները, օժանդակել պետությանը՝ ժողովրդի մեծ ներգրավվածությամբ նպաստելու ազգային հիմնախնդիրների լուծմանը, կայունության հաստատմանը, ինչպես նաև օգնել հասարակությանը սոցիալական առաքելություններով, մարդասիրական և բարեսիրական ծրագրերի միջոցով: Մեծ չէին Եկեղե-

ցու հնարավորությունները: Համայնավարական իշխանությունների վերջին տարիներին Հայաստանում գործում էին միայն երեք տասնյակը չգերազանցող եկեղեցիներ և սակավաթիվ հոգևորականներ:

Խորհրդային տարիներին անկում էր ապրել եկեղեցական կյանքը, ավելի քան 400 հոգևորականներ, եպիսկոպոսներ և քահանաներ կա մ աքսորվել էին, կա մ մահվան դատապարտվել: 1938 թ. Մայրավանքում խեղդամահ էր արվել Ամենայն Հայոց Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսը: Միայն Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1945 թվականին էր, որ Խորհրդային Միության ղեկավար Ստալինը Հայոց Գևորգ Զ Հայրապետին հնարավորություն ընձեռեց վերաբացելու Գևորգյան Հոգևոր Ճեմարանը սահմանափակ թվով աշակերտներով, արտոնվեց Մայր Աթոռի ամսագրի հրատարակությունը և մի քանի վանքերի վերաբացումը: Սակայն այս ամենն իրականացվում էր խիստ հսկողության ներքո: ԽՍՀՄ-ում մշակվել էր խղճի և համոզմունքի ազատության օրենք, որն իրական կյանքի հետ որևէ առնչություն չունեցող մի փաստաթուղթ էր: Սույն օրենքը խրախուսում էր աթեիզմի քարոզչությունը, որը մեծ ջանասիրությամբ իրականացնում էին աթեիզմի գաղափարախոսները հանրակրթական դպրոցներում, բուհերում, աշխատավայրերում: Սակայն շատ հայ կոմունիստներ այս պայմաններում պահպանում էին իրենց հավատքը, գաղտնի մասնակցում եկեղեցական արարողություններին ու խորհուրդներին և ըստ հնարավորության աջակցում Եկեղեցուն՝ այն դիտելով որպես ազգային կյանքում անփոխարինելի առաքելություն իրականացնող հաստատություն:

Մեր Սուրբ Եկեղեցին անասելի հարվածներ կրեց նաև Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի հայաշատ քաղաքներում թուրքական իշխանությունների կողմից իրագործված ցեղասպանության տարիներին: 1915-1921 թթ. գոհվեց մեկ և կես միլիոն հայ բնակչություն, ավելի քան 4000 հոգևորականներ, ոչնչացվեցին և պղծվեցին հարյուրավոր վանքեր և եկեղեցիներ: Այսօր էլ Թուրքիայում շարունակվում է մշակութային Եղեռնը: Այն, ինչ չէր ավերվել Ցեղասպանության տարիներին, ավերվում է այսօր: Լավագույն դեպքում հայկական եկեղեցիները վերածվել են մզկիթների կամ ծառայեցվել են տնտեսական նպատակներով:

Ցեղասպանությունից մազապուրծ հայրերին երբ ապաստան գտան տարբեր երկրներում, ստվարացան պատմական հայ համայնքները, շատ երկրներում կազմվեցին նոր համայնքներ, և ձևավորվեց արդի հայ Սփյուռքը: Նոր մարտահրավերների առջև կանգնեց Հայ Եկեղեցին նաև Սփյուռքում:

### ԲԱՑՎՈՂ ԱՐՇԱԼՈՒՅԱԸ

Եկեղեցին իր առջև ծառայած խնդիրներին վճիռներ գտնելու և իր առաքելությունը լիովին իրականացնելու համար կարիք ուներ նախևառաջ պատրաստելու հոգևորականների նոր սերունդ, քանզի հունձքն առատ էր, բայց մշակները՝ սակավ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործող Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տարեցտարի ավելացան ուսանողները, ընթացան կրթական գործի կազմակերպման բարելավումներ: 2002 թ. Մեր ջանքերով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ճանաչվեց որպես բարձրագույն կրթական հաստատություն:

1990 թվականին դեռևս Արարատյան Հայրապետական թեմում Մեր առաջնորդական փոխանորդության տարիներին հիմնեցինք հոգևոր կրթական մի նոր հաս-

տատություն՝ Սևանի Վազգենյան Դպրանոցը: Դարավոր վանքում՝ նորահաստատ Սևանի Վազգենյան Դպրանոցում, ուսումնառությունը սկսվեց 23 ուսանողներով: Դասավանդման ընթացքում շեշտադրվեցին հայագիտական առարկաները, որպեսզի ապագա հոգևորականները կրթվեն և աճեն Հայ Եկեղեցու ավանդությամբ՝ ծանոթանալով Հայ Եկեղեցու պատմությանը, հայ մատենագրությանն ու գրականությանը: Սևանի վանքի Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եկեղեցիներում կազմակերպվեցին Դպրանոցի սաների մասնակցությունը եկեղեցական արարողություններին՝ Սուրբ Պատարագին և Ժամերգություններին: Դպրանոցում նախապես զգացվում էր աստվածաբան ուսուցիչների պակաս, և աստվածաբանական գիտելիքների բաց ինքներս էինք լրացնում: Արդարև, շնորհակալ ենք Տիրոջը՝ օրհնությամբ պսակեց մեր ջանքերը: Սևանի Վազգենյան Դպրանոցը կայացավ և իր բարի արդյունքները պարզվեց և պարզվում է մեր Եկեղեցուն ու ժողովրդին: Այս սեպտեմբերին Տիրոջ ողորմությամբ իր դռները կբացի հոգևոր կրթական մեկ այլ հաստատություն՝ Հատիճավանքում:

Հոգևորականների պակասը լրացնելու համար Մենք նաև ձեռնամուխ եղանք քահանայից պատրաստման լսարանի ծրագրին: Հայաստանի տարբեր շրջաններից և գյուղերից հրավիրեցինք գիտական աստիճան ունեցող բարձրագույն կրթությամբ անձանց, և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարկից ներս եռամյա պատրաստության շրջանն անցնելուց հետո նրանց կոչեցինք քահանայական ծառայության:

Միջեկեղեցական հարաբերություններում էկումենիզմի ոգով հատկանշվող ժամանակակից մեր կյանքը պահանջում է ապահովել համապատասխան իմացությամբ հոգևորականների պատրաստությունը: Այս նպատակով ավելի մեծ թվով երիտասարդ հոգևորականների հնարավորություն ընձեռնվեց կրթությունը շարունակելու արտասահմանյան տարբեր աստվածաբանական կրթական հաստատություններում: Այսօր Հայ Եկեղեցու երիտասարդ հոգևորականներ ուսանում են ինչպես Հռոմում, այնպես և Գաթուլիկ Եկեղեցու այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Աշխարհն արագորեն փոխվում է, փոխվում են նաև Եկեղեցու մարտահրավերները, բայց հավատացյալ ժողովուրդը հոգևորականի մեջ այսօր էլ նախևառաջ տեսնում է Տիրոջ առաքյալին ու ավետարանչին՝ լուսավոր հավատքով, կյանքի սրբությամբ, ծառայասիրությամբ, բարձր ինտելեկտով և նվիրվածությամբ: Այսօր ժողովուրդը սպասում է ավանդության ոգով կրթված հոգևորականների, ովքեր իրենց անձնվեր սպասավորությամբ պայծառություն կհավելեն մեր Եկեղեցուն:

Հայ Եկեղեցու ավանդությամբ ձեռնադրվող բոլոր հոգևորականները, լինեն կուսակրոն, թե ամուսնացյալ, նոր անուն են ստանում՝ վերանվանվելով Եկեղեցու սրբի, նշանավոր Հայրի և Հայրապետի անունով, ովքեր իրենց հավատքով, նվիրումով հանձնառու են եղել կրելու ամեն դժվարություն, ամեն չարչարանք՝ հանուն հավատացյալ ժողովրդի, հանուն Հիսուս Քրիստոսի: Անվանափոխության այս հիանալի ավանդությունը միանգամայն խորը հոգևոր նշանակություն ունի ընծայվողի կյանքում՝ լուսավոր հայրերի օրհնակով նույն նվիրումով և նույն սիրով ծառայություն մատուցել ժողովրդին՝ ճշմարիտ ուղիով առաջնորդելով դեպի փրկություն:

Եկեղեցական Մեր ծառայությունն սկսելով խորհրդային իշխանության տարիներին՝ միշտ երազել էինք այն օրվան, երբ Տերը հնարավորություն կընձեռեր ազատ

պայմաններում Ավետարանը քարոզելու, հոգևոր կյանքը նորոգելու, գորացնելու Եկեղեցու տերունապատվեր առաքելությունը: Հայաստանի անկախությամբ ստեղծվեց այդ հնարավորությունը: Հայրենի իշխանությունը աջակից եղավ մեր Եկեղեցուն իր առաքելության մեջ: Ընդունվեց համապատասխան օրենք, որով կարգավորվում են Հայ Եկեղեցու և պետության հարաբերությունները: «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան մուտք գործեց հանրակրթական դպրոցներ՝ որպես կրթական ծրագրի մաս: 1995 թ. Երևանի պետական համալսարանում հաստատվեց աստվածաբանության ֆակուլտետը, որն այսօր ունի շուրջ 270 ուսանող: Կազմակերպվեց հոգևոր սպասավորություն հայոց բանակում, բանտերում, մեկուսարաններում, ինչպես նաև հիվանդանոցներում: Այս առաքելության իրականացման համար Մայր Աթոռում և թեմերում ստեղծված են առանձին գրասենյակներ և հովվություններ:

Անկախության տարիներին վերադարձվեցին և գործող դարձան խորհրդային շրջանում բռնագրավված վանքերն ու եկեղեցիները: Այսօր ձեռնամուխ ենք խոնարհված աղոթավայրերի վերականգնման աշխատանքներին, նոր տաճարների ու եկեղեցիների կառուցմանը խիտ բնակեցված վայրերում: Արձանագրենք, որ նախընթաց շրջանում կառուցվել են շուրջ վեց տասնյակ եկեղեցիներ Հայաստանում, նույնքան և ավելի՝ Խորհրդային Միության նախկին հանրապետություններում: Նոր թեմեր են հաստատվել Հայաստանում և Մփյուռքում:

Հրամայական էր վերականգնելու Հայ Եկեղեցու կրթական ավանդույթները, որպեսզի Տիրոջ Ավետարանով լուսավորվեն երիտասարդների սրտերը, մեր ընտանիքները՝ փոխակերպելու համար մեր հասարակությունը և մեր ապագան: Հոգևորականների պակասի պայմաններում կարևորվում էր քարոզչության իրականացումը նաև ռադիոհեռուստատեսային ծրագրերով, պարբերականների միջոցով: Ինչպես քրիստոնեական դաստիարակության, հոգևոր կյանքի նորոգության Մայր Աթոռում ներկայիս գործում են Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը՝ «Քրիստոնյա Հայաստան» պարբերաթերթով, «Շողակաթ» հեռուստաընկերությունը, հրատարակչական մարմինը: Թեմերում ձևավորվել են երիտասարդական կենտրոններ, 1993 թ. Մեր անմիջական ջանքերով հաստատվեցին «Հայորդյաց սուներ»-ը, որտեղ 5-16 տարեկան շուրջ 3000 աշակերտներ ստանում են քրիստոնեական և ազգային-մշակութային կրթություն: Հանրապետության տարբեր քաղաքներում գործում են յոթ բարեգործական ճաշարաններ, ընթացքի մեջ են ծերանոցի և երեք մանկատների կառուցումը, իրականացվում են մարդասիրական ծրագրեր, որոնք հոգալով կարիքավորների մասին՝ հավատքն են հավելում մարդկանց սրտերում:

Այսօր հոգևոր առաքելության լայն ասպարեզ է բացված երիտասարդ հոգևորականների համար, կոչում ու պատիվ՝ հովվելու հայ ժողովրդի թվով փոքր, բայց հավատքով, քրիստոնեական ժառանգությամբ մեծ ածուն:

Միբելինե՛ր, համառոտ այս թվարկմամբ ցանկացանք ձեզ ներկայացնել Հայ Եկեղեցու կրթական ավանդությունը, ներկա իրավիճակները և վերջին տարիների գործունեությունը: Այսօր Մեր շնորհակալությունն ու գնահատանքն ենք հայտնում Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցուն երիտասարդ հայ հոգևորականներին բարձրագույն կրթական հաստատություններում ուսանելու ընձեռած հնարավորության համար: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Մալեգյան համալսարանի ռեկտորին, Գիտլորիդին՝ երիտասարդների կրթության և քրիստոնեական դաստիարակության բնագավառում ներդրած աշխատանքների և ջանքերի համար, Մեզ պատվավոր

դոկտորի աստիճան շնորհելու այս առիթով:

Մեր հայցն է առ Բարձրյալն Աստված, որ արգասաբեր դարձնի Հայ և քույր Եկեղեցիների հոգևոր կրթական հաստատությունները, որտեղ կրթվում ու դաստիարակվում են սպասավորներ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու և համայն մարդկության համար:

Աղոթում ենք, որ Տիրոջ Սուրբ խորանի սպասավորները հավատքի կենդանի՝ գործերով, իրենց նվիրումով արժանիորեն վաստակեն սերն ու հարգանքը հավատացյալ ժողովրդի: Թող Տերն օրհնի նաև Հայ և Կաթոլիկ Եկեղեցիները, այստեղ ներկա հոգևորականների և աշխարհականների դասը՝ իրականացնելու և մարմնավորելու տեսիլքներն ու երազները, որը Մեր Տիրոջ և Հիսուս Քրիստոսի կամքով պիտի առաջնորդի համայն մարդկությանը՝ «Ճանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Մերը, շնորհը և խաղաղությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի թող լինի միշտ մեզ հետ և ամենքի. Ամեն:

Վեհափառ Հայրապետի իջևանած հյուրանոցում երեկոյան տրվեց պաշտոնական ընթրիք կարդինալ Կասպերիի կողմից, որին ներկա էին կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականներ, որոնց շարքում վեց կարդինալներ, այդ թվում և Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Բերտոնեն:

Պաշտոնական հանգամանք ունեցող այս ընթրիքին խոսք ասացին Վեհափառ Հայրապետը և կարդինալ Կասպերին, ապա նորին Սրբությունը ընթրիքին ներկա կաթոլիկ հոգևորականներին հուշանվերներ հանձնեց ի հիշատակ այս հանդիպման:

**Ութը մայիսի** – Վեհափառ Հայրապետն առավոտյան այցելեց Վատիկանի Արևելյան կաթոլիկ եկեղեցիների խորհրդի կենտրոն, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեց այս խորհրդի նախագահ կարդինալ Մանտրին:

Հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ Հռոմի Լևոնյան հայ կաթողիկե վարժարանում: Վեհափառ Հայրապետը «Հրաշափառով» նախ մուտք գործեց վարժարանին կից եկեղեցին: Այստեղ կատարված եկեղեցական արարողությանը ներկա էին նաև Գերապայծառ Մանվել Բաթաթյանը (Նյու Յորք), Գերապայծառ Գրիգոր Կապրոյանը (Փարիզ) և Գերապայծառ Գուսան Օգոստինոսը (Ալեքսանդիրա): Վեհափառ Հայրապետին բարիգալստյան ողջույնի խոսքով դիմեց Գերապայծառ Բաթաթյանը՝ ասելով, որ այս վարժարանում երկրորդ անգամ են հյուրընկալում Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետին. առաջին անգամ, երբ Նորին Սրբությունը Հռոմ էր եկել՝ Ս. Էջմիածին փոխադրելու Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները և երկրորդ անգամ այժմ ուրախությունն ունեն տեսնելու Հայոց Հայրապետին, և որ այս զույգ այցելությունները հայ կաթողիկե համայնքի կրթական կենտրոն արտահայտությունն են Գարեգին Երկրորդի լայնասիրտ ու լայնամիտ հոգու:

Շարունակելով խոսքը՝ Գերապայծառ Բաթաթյանն ասաց, որ իրենք տպավորված են Վեհափառի շինարարական գործունեությամբ, որով իրապես վաստակել է Շինարար կաթողիկոսի տիտղոսը, և մաղթեց, որ Սուրբ Հոգին միշտ ներշնչի և ամրացնի քայլերը Գարեգին Երկրորդի, և որ իրենք երջանիկ կլինեն, եթե Վեհափառ Հայրապետը հաճախ այցելի և հայրենիքի շունչն ու հոգին բերի իրենց:

Ապա ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ ասե-



ԱՂՈՒՅՑՈՎ ԳԻՍՏԱՎՈՐՈՒՄ ՀՅՈՄԻ ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱՐՔԱՐԱՆՈՒՄ ԲԱՐԻԳԱՍՏՅԱՆ ԽՈՍԻ Է ԱՍՈՒՄ ԳԵՐԱՊԱՅՅԱՌ՝ ՄԱՆՎԵԼ ԲԱԹԱՐՅԱՆԸ



լով. «Եկել ենք գորացնելու այն ոգին և գործակցությունը, որոնցով հատկանշվում են երկու Եկեղեցիների հարաբերությունները վերջին տասնամյակներին:

Ուրախ ենք, որ երկրորդ անգամ գտնվելով Լևոնյան վարժարանում՝ այստեղ տեսնում ենք մեծ թվով երիտասարդների հատկապես Միջին Արևելքից, ովքեր եկել են Տիրոջ առջև իրենց ուխտը կատարելու և իրենց ծառայությունը բերելու մեր ժողովրդի գավակներին Կաթողիկե Հայ Եկեղեցու օրհնության ներքո:

Մենք մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում և մաղթանքը, որ շարունակեք ձեր գործունեությունը և ազգային մեր արժեքները կենդանի պահեք և հաղորդ դարձնեք Կաթողիկե համայնքի մեր եղբայրներին և քույրերին:

Բերում ենք հայրենիքի շունչը, որպեսզի հայրենյաց շնչով և օրհնությամբ գորանաք, խանդավառվեք, գոտեպնդվեք և շարունակեք ձեր առաքելությունը: Թող Տերը միշտ Իր հայացքը պահի մեր գավակաց վրա ի Հայաստան և ի Սփյուռու աշխարհի: Մենք մեր ողջույններն ենք բերում նաև Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդին և մաղթում երկար և առողջ տարիների արգասավոր ծառայություն և գահակալություն»:

Արարողության ավարտին վարժարանի սաները «Հայրապետական մաղթանքով» Հայոց Հայրապետին եկեղեցուց առաջնորդեցին դեպի վարժարանի հանդիսությունների սրահը, ուր Նորին Սրբությանը դիմավորեցին Գերապայծառ Ռաֆայել Մինասյանը և վարժարանի տեսուչ Հովսեփ ծայրագույն վարդապետ Քելեկյանը:

Հայոց Հայրապետն այնուհետև այցելեց Հռոմի Տիբերինա կղզակում գտնվող Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցին, որտեղ գտնվում են Հայոց աշխարհում քարոզած երկու առաքյալներից մեկի՝ Ս. Բարդուղիմեոսի մասունքները:

Այս եկեղեցին պատկանում է Սուրբ Էջիղիոյի համայնքին, որի անդամներն ուղեկցեցին Վեհափառ Հայրապետին եկեղեցում գտնվելու ընթացքում:

Կեսօրին Նորին Սրբությունն այցելեց Հռոմի Արևելագիտության քահանայապետական կաճառը, ուր Հայոց Հայրապետի այցելության շրջանակում կազմակերպվել էր գիտաժողով՝ նվիրված Սուրբ Պատարագի հայկական արարողությանը:

Գիտաժողովը բացվեց Վեհափառ Հայրապետի խոսքով, ապա Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց պրոֆ. Ն. Ռոբերտ Թաֆթին՝ նվիրելով մի լանջախաչ:

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

### Միրելինե՛ր

Հոգևոր ուրախությամբ կրկին համախմբվել ենք Հռոմի Արևելյան ինստիտուտի նվիրական այս հարկում՝ մասնակցելու Հայ Առաքելական Եկեղեցու Սրբազան Պատարագին նվիրված գիտաժողովին, որը կազմակերպել է բոլորիս կողմից հարգված և ճանաչված, Արևելյան Եկեղեցիների մեծ գիտակ և Հայ Եկեղեցու ազնիվ բարեկամ Հայր Ռոբերտ Թավթը:

Հարազատ ենք զգում գիտական շրջանակներում մեծ հռչակ ունեցող Հռոմի Պապական Արևելյան ինստիտուտի այս սրահում, որտեղ կազմակերպված միջոցառումների ընթացքում ներկաներին իրենց պատգամներն ու բարեմաղթանքներն են հղել Եկեղեցու պետեր, Եկեղեցական նշանավոր գործիչներ, մեծանուն աստվածա-

բաններ: Այս ամբիոնից էր, որ տարիներ առաջ Հայ Եկեղեցու ավանդության և պատմության շուրջ բովանդակալից դասախոսությամբ հանդես եկավ Եկեղեցիների Էկումենիկ հարաբերություններում իր մեծ նպաստը բերած երջանկահիշատակ Մեր նախորդը՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Գաթոնիկոսը: Եվ այստեղ էր, երբ միասնաբար անդրադարձանք և փառաբանեցինք 2001 թվականի հոբելյանը՝ Հայոց 1700-ամյա մեծ դարձը քրիստոնեության, 2000 թվականին Հռոմ Մեր այցելության առիթով կազմակերպված գիտաժողովով:

Գնահատելի ավանդ ունի Արևելյան ինստիտուտը Հայ և Գաթոնիկ Եկեղեցիների բարեկամության զորացման գործում: Հայ Եկեղեցու ներկայացուցիչների հետ համագործակցաբար հետազոտությունների և արժեքավոր հրապարակումների միջոցով կյանքի էք կոչում ձգտումը՝ միմյանց ավանդություններն ավելի լավ ճանաչելու և փոխադարձ ոգեղեն արժեքները գնահատելու: Ականատեսն ենք ինստիտուտի ծավալած գործունեությանը՝ որպես մտքի դարբնոցի՝ արդյունավորված Արևելյան Եկեղեցիների բնագավառում երիտասարդ աստվածաբաններին տրված մասնագիտական ամբողջական գիտելիքներով, որտեղ, ի թիվս աշխարհի տարբեր ծագերից եկած ուսանողների, բարձրագույն ուսումը շարունակելու հնարավորություն է ընձեռվում նաև Հայ Եկեղեցու հոգևորականներին, որի համար Մեր օրհնությունն ենք բերում և Մեր շնորհակալությունը հայտնում ինստիտուտի տնօրինությանն ու դասախոսական կազմին: Արևելյան Եկեղեցիների պատմության, ծեսի, կանոնների և հայրերի հարուստ ժառանգության արժեքավոր ուսումնասիրություններով հայտնի *“Orientalia Christiana Analectica”* և *“Orientalia Christiana Periodica”* պարբերականները բազում հոդվածներ և մենագրություններ են հրատարակել նաև Հայ Եկեղեցու ծեսի և պատմության մասին:

Այսօր ևս տեսնում ենք այդ բարի ավանդության շարունակությունը՝ դարերի ընթացքում հոգեղինությամբ հարստացած Հայ Եկեղեցու Պատարագի ուսումնասիրության նպատակով գիտաժողովի գումարմամբ:

Հայոց Պատարագի ուսումնասիրությունը մեզ հեռավոր անցյալ է տանում, երբ Հայ Սուրբ Թարգմանիչները՝ Սուրբ Մահակ Պարթև Հայրապետը և Հայոց Գրերի ստեղծող Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, նրանց անմիջական աշակերտները նվիրյալ ջանքերով թարգմանեցին Սուրբ Գրքի ընկալյալ բնագրերը և Պատարագի առաջին տեքստերը:

Արդարև, Սրբազան Պատարագի բազում տեքստեր են թարգմանվել հայերենի: Միջնադարում հայախոս դարձան Սուրբ Պատարագի տարբեր խմբագրություններ: Հայոց Պատարագի միջոցով Մեզ հետ են խոսում Սուրբ Հակոբոս Տեառնեղբայրը, Սուրբ Աթանասը՝ Ալեքսանդրյան Աթոռից, Սուրբ Բարսեղը՝ Կեսարիայից, Սուրբ Գրիգորը՝ Նազիանզից, Սուրբ Հովհաննը՝ Կոստանդնուպոլսից: Այն, ինչպես արտահայտություն հավատքի միության, լավագույն կերպով իր մեջ է ընդգրկել հանգանակը Նիկիայի 318 հայրապետների՝ դրանք ընդլուզելով Մեր հավատքի Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքներով, Հայ Եկեղեցու լուսեշիրիմ հայրերի երգերով ու շարականներով: Պատմության ընթացքում հայ ժողովուրդը իր ստեղծագործ ժառանգությունից ամենաթանկն է նվիրաբերել Տիրոջ անարյուն ընծայաբերման Սուրբ Խորհրդին:

Միրելի ներկաներ,



Պապական պաշտոնական գրասենյակում նախ տեղի ունեցավ առանձնազրույց երկու հոգևոր պետերի միջև, ապա երկու քահանայապետերը եկան կից ընդարձակ դահլիճը, ուր նրանց միացան պատվիրակությանը մաս կազմող հոգևորականները և աշխարհականները: Նորին Սրբությունը Հռոմի Պապին ներկայացրեց հայրապետական ջրախմբի անդամներին, որոնց Սրբազան Քահանայապետը հանձնեց հուշանվերներ:

Հանդիպումն այնուհետև շարունակվեց Կլեմանթինա պապական դահլիճում, ուր տեղի ունեցավ էկումենիկ աղոթք երկու Եկեղեցիների պետերի նախագահությամբ, որից հետո Հայոց Հայրապետը և Հռոմի Պապը «Հրաշափառի» երգեցողությամբ առաջնորդվեցին իրենց համար պատրաստված գահերը: Տեղի ունեցած էկումենիկ արարողության ընթացքում Պապը հայերենով մի քանի կարճ աղոթքներ ասաց: Արարողության վերջում խոսք ասացին երկու քահանայապետերը՝ կարևորելով եղբայրական հարաբերությունների առավել ամրապնդումը երկու քույր Եկեղեցիների միջև:

### **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՊԱՊԻՆ**

*Ձե՛րդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս*

*Աղոթարար սրտով և բերկրաշատ հոգով եղբայրական սիրտ Մեր ողջունն ենք բերում Ձերդ Սրբությանը՝ Մեզ խնդակից ունենալով հոգևորական և աշխարհական գավակներին աշխարհասփյուռ մեր Եկեղեցու:*

*Գոհություն Երկնավորին, որ իբրև հաջորդը Սուրբ Թադեոսի և Բարդուղիմեոսի, առաքելապատիվ Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ այս բարի օրվա լույսն ենք վայելում, և տիրավանդ խաղաղության համբույր ենք փոխանցում միմյանց Սուրբ Պետրոսի Աթոռի արժանաշնորհ Գահակալիդ հետ՝ Ձեր երջանկահիշատակ և երանելի նախորդին աստվածաշնչական Արարատի նայվածքի տակ ընդունելու բերկրանքն ունենալուց յոթ տարի անց: Առավել ուրախալի է, որ մենք խաղաղության համբույրը միմյանց փոխանցում ենք այսօր՝ մայիսի 9-ին, երբ մեր Հայրենիքում նշում ենք տոնը Հաղթանակի և Խաղաղության, օրը հիշատակության՝ ժողովուրդներին մեծ աղետներ բերած Երկրորդ աշխարհամարտի ավարտի և օրը հիշատակության Լեոնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարում մեր ժողովրդի ձեռք բերած հաղթանակի:*

*Մենք գալիս ենք մի հնագույն երկրից, ուր առաքյալների քարոզությամբ ծնունդ առավ առաջին քրիստոնյա պետությունը, և ուր հավատքը չտեսավ երբեք պարտություն: Աստվածային սիրտ և փրկության հույսի առջև խոնարհվեց մեր ժողովուրդը և իրեն բաժին ընկած բազում նեղություններն ու աղետները հաղթահարեց Քրիստոսի Խաչի զորությամբ: Արդարև, քրիստոսանմանություն եղավ ամբողջությամբ մեր քրիստոնեական պատմությունը, և նրա էջերը՝ ավետարանական կենդանի ընթերցումներ:*

*Գոհություն և փառք Երկնավորին, որ մեր «փոքր ածուխ» կողմից Իրեն ընծայված հավատարմության վկայությունը պսակեց հաղթական փառքով և վայելչապես*



ՀԱՆՈՒՊՈՒՄՆ ԸՆԹԱՅՐԻՒՄ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀՈՒՍԻ ՊԱՊԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ  
ՎԱՏԻԿԱՆԻ ԿԼԵՄԱՆԹԻՆԱ ՊԱՊԱԿԱՆ ԳԱՀԼԻՇՈՒՄ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՔԱՄԵՐԻ ԱՆԳԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԸ

գարդարեց մեզ իբրև Աստծո «սեփական ժողովուրդ»: Տիրոջ շնորհընկալը դարձավ ազգս վերստին, երբ Փրկչի հարուցյալ կյանքի լույսով անկախության դրոշը պարզվեց մեր Հայրենիքում, ուր մեր ժողովուրդը, հակառակ շարունակվող շրջափակման, արտաքին ու ներքին բազում դժվարությունների, ապրում է հոգևոր վերագարթոնքի ու իր միասնական կյանքի նոր հույսերով: Այսօր ուրախ առիթն ունենք փոխանցելու Ձերդ Մրբությանը ողջույնն ու բարեմաղթանքները Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ տիար Մերժ Սարգսյանի, ով նվիրյալ ջանքեր է ներդնում մարմնավորելու համար մեր ժողովրդի՝ առավել լավ կյանք ունենալու սպասումները և առաջնորդելու երկիրը ժողովրդավարության ու զարգացման ուղիով: Փոխանցում ենք Ձեզ նաև ողջույնները համայն մեր ժողովրդի՝ վերագարթոնք ապրող Սփյուռքով, ազատ և ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությամբ, որի միջազգային ճանաչումը՝ Աստծո կամքով և աջակցությամբ արդարասեր և մարդասեր պետությունների, պիտի հաղթանակած տեսնենք:

Միբեցյալ եղբայր ի Քրիստոս, Տիրոջ ամենախնամ Աջի օրհնությամբ կանգնել ենք այսօր կողք կողքի՝ վկայելու և գորացնելու մեր Եկեղեցիների եղբայրական սերը և համագործակցությունը և հավատարիմ Եկեղեցու Հայրերի ավանդին ու սուրբ ժառանգությանը՝ մեր տարբերություններով և առանձնահատկություններով հանդերձ առավելաբար կարևորելու այն, ինչը մեզ միավորում է: Առանձնակի գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև սիրո ոգին և համագործակցությունը իրական դրսևորումներ են գտնում մեր ժամանակներում: Եղբայրական այդ ազնիվ վերաբերմունքի արտահայտությունը եղան նաև մեր Եկեղեցու առաքելապատիվ Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանի կանգնեցումը և Ձեր նախագահությամբ մեծ սրբի անունով հրապարակի անվանակոչումը Վատիկանում, ինչպես և՛ Հռոմի հայ համայնքին Սուրբ Վլաս եկեղեցու տրամադրումը, որը աղոթատունն է եղել հայ ուխտավորների: Մեր շնորհակալությունն ենք բերում Ձեզ և հանձին Ձեզ՝ Կաթոլիկ Եկեղեցուն, հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած համակրանքի և գորակցության համար:

Տիրավանդ սիրո ուղին այսօր բարի պտուղներ է պարգևում մեզ նաև էկումենիկ շարժման մեջ: Մենք ողջունում ենք երկխոսությունը Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքի միջև: Այսօր մեր ժամանակների արագընթաց զարգացումների մեջ հրատապ են ծնունդ առնող բնապահպանական, ընկերային, տնտեսական, բարոյական բազմապիսի հարցերը, աշխարհայնացման ընթացքները, երբ նվազում է ճշմարիտ հարգանքը մարդու հանդեպ, սերը՝ Աստծո հանդեպ: Հրամայական է Քրիստոնեական Եկեղեցիների առավել համախմբված և ջանադիր գործակցությունը, քանզի Քրիստոսի Սուրբ Եկեղեցին ընդգրկուն համագործակցությամբ միայն ի վիճակի պիտի լինի ավելի մեծ կարողականությամբ ծառայելու աշխարհում խաղաղության հաստատմանը, մարդու և ազգերի, ընտանիքների, սոցիալապես խոցելի և անապահով խավերի իրավունքների պաշտպանությանը, ավետարանական արժեքներով կյանքի վերափոխմանը՝ ի սեր բարօր և երջանիկ աշխարհի կառուցման:

Միբեցյալ եղբայր ի Քրիստոս, Մեր հոգին ուրախությամբ է արձագանքում Ձեր կոչին, որը հովվապետական Ձեր վերջին այցի ընթացքին ուղղեցիք համայն աշխարհին, բոլոր պատասխանատուներին, որ փոխարեն առճակատումների, բռնությունների, պատերազմի՝ կրոնները, ազգերը և պետությունները ընտրեն երկ-

խոսության և փոխըմբռնման ճանապարհը:

Հարագատ է Մեր սրտին Ձեր նախանձախնդրությունը քրիստոնեական ճանաչողությունը, կրթությունն ու դաստիարակությունը գորացնելու ուղղությամբ՝ ուշադրության ներքո ունենալով կրթական հաստատությունները, որպեսզի նոր սերունդը, երիտասարդները նորոգյալ հոգով, իրենց ընթացքով, գործերով և կյանքով վկայեն Քրիստոսին և քրիստոնեական ճշմարտությունները: Այս նույն նպատակին են ուղղված մեր Եկեղեցու ջանքերն ու ծրագրերը, որոնց Ձերդ Սրբությունը նույնպես սատարում է, մանավանդ հոգևոր սպասավորների պատրաստության շրջագծում: Եղբայրական սիրո ոգին Հայ Եկեղեցու և Կաթոլիկ Եկեղեցու միջև և այն արդյունքները, որ ունենք այսօր, քաջալերություն են մեր միասնական ջանքերի առավել արդյունավորման՝ հանուն մեր նույն առաքելության, որի առաջնորդողը Քրիստոս մեր Տերն Ինքն է:

Այս լավատեսությամբ Մենք ողջունում ենք Կաթոլիկ Եկեղեցու բոլոր սպասավորներին ու հավատացյալ հոտին և Մեր գնահատանքն ենք բերում Քրիստոնեական Միության Խրախուսման Պապական Խորհրդի Նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Վալտեր Կասպերին և այն անձանց, որոնց անդուլ աշխատանքի շնորհիվ զարգանում են Մեր երկկողմ հարաբերությունները՝ աճող համաձայնությամբ և փոխադարձ հարգանքով:

Մեր օրհնությունն ենք բերում այստեղ ներկա կարդինալ Տարչիզիո Բերտոնեին, ով ժամանելով Հայաստան հանուն Ձերդ Սրբության բերեց Մեզ Ձեր սիրալիր, ջերմ նամակը և Հոռոմ այցելելու հրավերը: Մեր գնահատանքն ենք ցանկանում արտահայտել Անդրկովկասում Ձեր Նվիրակ Գերաշնորհ Տ. Կլաուդիո արքեպս. Գուջերոտտիին, որն արդյունաշատ գործունեություն է ծավալում մեր երկու Եկեղեցիների և պետությունների համագործակցության համար:

Ավարտելով Մեր խոսքը՝ սիրով Մեր և Հայաստանի Հանրապետության նախագահի անունից հրավիրում ենք Ձեզ Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մենք և մեր հավատացյալ ժողովուրդը միշտ ուրախ կլինենք ընդունելու Ձեզ համայն հայության հոգևոր կենտրոնում՝ միասնական աղոթք բարձրացնելու Տիրոջ Էջքի Սուրբ Տաճարում:

Աղոթում ենք, որ Տերը երկար տարիների հովվապետական անսասան գավազան պարզևի Ձերդ Սրբությանը՝ մարմնավորելու Ձեր բոլոր իղձերն ու տեսիլքները՝ ի պայծառություն Կաթոլիկ Եկեղեցու և նրա հավատավոր գավակների:

Աղոթում ենք, որ Տերը մեր Իր բարի հայացքի ներքո պահի և պահպանի աշխարհը համայն՝ սիրո, համերաշխության և խաղաղության մեջ՝ Իր փառքի և աշխարհի բարօրության համար:

Բենեդիկտոս ԺԶ Սրբազան Պապը, պատասխան խոսքում ողջունելով Հայոց Հայրապետի այցը Վատիկան, անդրադարձավ երկու Եկեղեցիների այսօրվա հարաբերություններին՝ մաղթելով, որ Սուրբ Հոգին իրենց միշտ առաջնորդի դեպի սեր և խաղաղություն: Սրբազան Քահանայապետը իր գորակցությունը հայտնեց Հայաստանին՝ ասելով, որ աջակցելու է մեր երկրին խաղաղության և արդարության ուղիների ճանապարհին:

Երկու Եկեղեցիների պետերն էլ իրենց խոսքում կարևորեցին գործունեությունը եկումենիկ այն հանձնախմբի, որը կազմված է Հռոմեական Եկեղեցու և Հին Արևել-



ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ  
 ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԳԻՆԱԼ ՍԱՆՏՐԻԻ ՀԵՏ  
 ՀԱՆԳԻՊՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ



ՎԱՏԻԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՏՈՒՎԱՐ ԿԱՐԳԻՆԱԼ ԲԵՐՏՈՆԵԻ ՀԵՏ  
 ՀԱՆԳԻՊՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ



ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՀԱՆԱՅԱԹԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ  
ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԳԻՆԱԼ ԿԱՄՊԵՐԻԻ ՀՆՏ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱԹԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒԹՅՈՒՆ «ՌԱԳԻՌ ՎԱՏԻԿԱՆՆ»

յան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներից և կոչված է շարունակելու և խորացնելու երկխոսությունը նրանց միջև:

Ելույթներից հետո երկու Եկեղեցիների պետերը հուշանվերներ փոխանակեցին, ապա տեղի ունեցավ աջահամբույր, որի ընթացքում երկու հովվապետերի օրհնությունը ստացան դահլիճում ներկա աշխարհականները:

Հանդիպման ավարտին Սրբազան Քահանայապետը հյուրասիրություն կազմակերպեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էին նաև չորս կարդինալներ, այդ թվում և Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Տարչիգոն: Հայոց Հայրապետին ընկերակցում էին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության լուսարարապետ Ս. Նուրհան արքեպս. Մանուկյանը, Կ. Պոլսի Հայոց պատրիարքության լուսարարապետ Ս. Արամ արքեպս. Աթեշյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանը, ով նաև Վատիկան Հայրապետական այս այցելության ծրագրի գլխավորի պատասխանատուն է, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Ս. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այնուհետև այցելեց Վատիկանի Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի կենտրոն, ուր Նորին Սրբությանը ջերմորեն դիմավորեց խորհրդի նախագահ կարդինալ Կասպերին:

Հայոց Հայրապետն ապա այցելեց Սան Պիաճո և Սան Պաոլո (Սուրբ Պողոս) եկեղեցիները:

Սուրբ Պողոս տաճարում տեղի ունեցավ միջեկեղեցական երեկոյան ժամերգություն համատեղ նախագահությամբ Նորին Սրբության և կարդինալ Կասպերիի: Այստեղ հավաքվածներին օրհնության խոսքով դիմեց Վեհափառ Հայրապետը՝ սկսվող Հոգեգալստյան տոնի խորհրդով կարևորելով Եկեղեցիների համեղբայրությունը և կոչելով գործակցության ու սիրո այդ ոգով դիմագրավելու արդի աշխարհի մարտահրավերները:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԽՈՍՔԸ Ս. ՊՈՂՈՍ ՏԱՃԱՐՈՒՄ ԷԿՈՒՄԵՆԻԿ  
ԱՂՈԹՔԻ ԺԱՄԱՆԱԿ**

*Մերն ի սիրոյ զսերդ առաքեաց,  
Յինքն զանդամս իւր Քեւ յօդեաց,  
Չեկեղեցի Իւր զոր շինեաց,  
Մաքրեա ի մէնջ զմէզ մեղաց  
եւ զզեցո զլոյս փառաց:*

Բ Աուր Հոգեգալստեան

*Ձերդ Սրբություն,*

*Միրելի քույրեր և եղբայրներ*

*Հոգեգալստյան նորոգիչ տոնի նախօրեին Հայ Եկեղեցու մեծանուն հոգևորական Ներսես Շնորհալու այս աղոթքով ենք ողջունում Ձեզ՝ սիրելի սրբազան կարդինալ, Կաթողիկ Եկեղեցու հոգևոր դասին և հավատավոր ժողովրդին, և հայցում ենք Սուրբ Հոգու առատաբաշխ շնորհները բոլորիս համար:*

**Մենք գալիս ենք Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությանը լուսավորված աստվածաշնչային Արարատի երկրից, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի՝ Քրիստոսի էջքի տեսիլքով հաստատված Սուրբ Էջմիածնից: Եկել ենք մեր աղոթքը միախառնելու ձեր աղոթքներին և միասին հայցելու Տիրոջից համերաշխ եղբայրություն քրիստոնեական Եկեղեցիներին և խաղաղություն համայն աշխարհին:**

Առաջիկա կիրակի վերստին ապրելու ենք հիշատակներով Հոգեգալստյան հրաշագարդ իրադարձության, երբ առաքյալները համախմբվեցին Վերնատանը, մկրտվեցին հրով Տիրոջ Սուրբ Հոգու էջքի և հիմնադրվեց Առաքելական ու Ընդհանրական Եկեղեցին:

Հոգեգալստյան տոնն է Սուրբ Հոգու ներգործության, շնորհագարդու մեր անձերի ու հոգիների, որն ամրագրում է մեր մեջ սիրո ու համագործակցության ոգին, առաջնորդում դեպի ամենաբարին, ամենալավը, ներշնչում մեզ արիություն, ուժ և քաջություն՝ առանց բռնանալու յուրաքանչյուրիս մտածելու և գործելու ազատությանը:

Հոգեգալստյան տոնը պատգամ է մեզ՝ անդրադառնալու Եկեղեցու առաքելությանը, համերաշխության և համագործակցության ճանապարհով հասնելու աշխարհի առջև ծառայած մարտահրավերների լուծմանը:

Հոգեգալստյամբ հաստատված եկեղեցու միջոցով Աստված կնքում է Իր ուխտը մեզ հետ, որով Աստծո և Եկեղեցու անդամ ամեն մի մկրտվածի միջև հյուսվում է յուրօրինակ և բնավ նմանը չունեցող մի հարաբերություն, որը հիմնված է փոխադարձ վստահության և սիրո վրա: Արդարև, «Մերն ի սիրոյ գտերդ առաքեաց, Յինքն գանդամս իւր Քեւ յօղեաց»:

Այս բացարձակ նմանը չունեցող սիրո հաղորդության միջոցով է Աստված մեզ հաղորդակից դարձնում Իր Սուրբ Հոգու շնորհներին և արժանացնում Իր որդեգրությանը: Աստված Իր Սուրբ Հոգով մեզ բոլորիս դարձնում է մեկ Հոր՝ Աստծո որդիներ և ժառանգներ. «Զի որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա՛ են որդիք Աստուծոյ: Զի ո՛չ առէք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկեւոյ, այլ առէք զհոգին որդեգրութեան. որով աղաղակեմք, Աբբա՛, Հա՛յր: Նոյն ինքն Հոգի՛ն վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Եւ եթէ որդիք, ապա եւ ժառանգք, ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի» (Հռոմ. Ը 14-16):

Հոգեգալստյան օրը վերնատանը հավաքված բազմությունն է հիշեցնում այսօրվա մեր համախմբումը: Մենք մեկ ենք Քրիստոսով և մեկ մեր առաքելությամբ, հակառակ որ խոսում ենք տարբեր լեզուներով, կրում քրիստոնեական տարբեր ավանդություններ: Այս տարբերություններն առավել զարդարում են ի Քրիստոս մեր միությունը: Քրիստոսի Ավետարանի ժառանգորդներս միևնույն հոգով ենք աղոթքով արտասանում «Աբբա, Հա՛յր», քանզի մենք Նրա Եկեղեցին ենք:

**«Մերը [Որդին], Միբուց [Հորից], Քեզ՝ Միբուդ [Սուրբ Հոգուդ] առաքեց, Քեզանով Իրեն միացրեց Իր անդամներին՝ Իր Եկեղեցին, որ հիմնադրեց»:** Քրիստոս սիրով է շաղախում Իր Եկեղեցու ամեն մի քարը և կառուցում այն՝ Սուրբ Հոգու պարզևած սիրո միջոցով մեզ միացնելով Իրեն՝ իբրև Իր մարմնի անդամներ: Քրիստոս, որպես սիրո գերագույն օրինակ, միմյանց սիրել մեզ ավանդեց, Իր Եկեղեցին հիմնեց որպես երկնային սիրո հարկ երկրի վրա, որպեսզի մարդկային ցեղի որդիներս որդեգրության շնորհով այդ մեծ տան Հոր զավակները լինենք: Եվ եթե այդ ըն-

տանիքի «մի որևէ անդամ ցավ զգա, նրա հետ ցավ զգան բոլոր անդամները. և եթե մի անդամը փառավորվի, նրա հետ ուրախանան բոլոր անդամները» (Ա Կորնթ. ԺԲ 26): Սրտակցության այսօրինակ սխրանքը հիմնված է սիրո վրա և մերժում է ամենայն հակառակություն և ասելություն, քանզի ամենասուրբ սերն է ընդհանրական սուրբ ընտանիքի ամուր պատվարը, Հորը, որդիներին և որդիներին միմյանց հետ կապող շաղախը:

Պատմական տարբեր ուղիներով են անցել մեր Եկեղեցիները՝ երբեք չհեռանալով միմյանցից: Տիրոջ կամքն է, որ սիրո և եղբայրության ավետարանական միևնույն արժեքներով ապրող քրիստոնյաներս միասնական լինենք, ինչպես երկու հազար տարիներ առաջ էր Հոգեգալստի օրը՝ հաղթահարելու մարդկության առջև ծառայող մարտահրավերները, դիմագրավելու աճող աղքատության, գաղթականության, բարոյական այլասերումի, ահագնացող ահաբեկչության և համընդհանուր տաքացման սպառնացող վտանգները. սպառնալիքներ, որոնք այլընտրանք չեն թողնում Եկեղեցիների համերաշխ գործակցությանը՝ ի սեր ավելի լավ աշխարհ կերտելու մեր առաքելության իրագործման:

Ահա, այս գիտակցությամբ է, որ միասնական աղոթքի ենք կանգնած այս սուրբ տաճարում՝ Տիրոջից հայցելու իմաստությունը առավել արդյունավետ դարձնելու համար մեր համատեղ ջանքերը ի պայծառություն Իր Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հավատավոր Իր հոտի:

Աղոթք է այսօր մեր շուրթերին առ երկնավոր Տերը, որպեսզի Իր հանապազ օրհնության ներքո գորացնի եղբայրական հարաբերությունները Կաթոլիկ և Առաքելական մեր երկու Եկեղեցիների միջև, Իր առաջնորդությունը պարզևի մեզ ամենքիս՝ ընթանալու խաղաղության և սիրո աստվածահաճո շավիղներով:

Այլև հայցում ենք բարձրալից քաջառողջ արևշատություն, անսպառ եռանդ ու կորով Կաթոլիկ Եկեղեցու շնորհագարդ Քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ-ին, հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

**Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի  
եղիցի ընդ ձեզ և ընդ մեզ ամենեսին. Ամէն:**

Նույն օրը «Ռադիո Վատիկանի» կենտրոնակայանում տեղի ունեցավ Հայոց Հայրապետի մամուլի ասուլիսը: Նորին Սրբությունը իր գոհունակությունը հայտնեց այս այցելության հաջող ընթացքի համար՝ կարևորելով երկու Եկեղեցիների միջև առկա գործակցության առավել ընդլայնումն ու սերտացումը:

Վեհափառ Հայրապետի իջևանած հյուրանոցում երեկոյան կարդինալ Կասպերի կողմից տրվեց հրաժեշտի ընթրիք, որի ընթացքում դիմելով հավաքվածների՝ Վեհափառ Հայրապետը ասաց. «Մեր երկու Եկեղեցիների միջև այսօր առկա հարաբերությունների ճարտարապետներն են Վազգեն Առաջինը և Պողոս Զ Պապը: Նրանց ցանած հունդերը գորացրել և բարձրացրել են Գարեգին Առաջինը և Հովհաննես-Պողոս Բ Պապը: Նրանք երկուսն էլ մարմնական ցավերի մեջ աշխատում էին իրար գորակից լինել: Այդ ջերմ սերը և եղբայրասիրությունը առավել գորացնելու համար այժմ մենք ենք մեր պատվիրակությամբ խմբվել և եկել, և Աստված կօրհնի մեր այս առաքելությունը»:

Վատիկանում մայիսի իննին Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև Անգլիկան Եկեղեցու Պետ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռուան Վիլյամսին: Այս հանդիպմա-

նը Նորին Սրբությանն ընկերակցում էին Ս. Արամ արքեպս. Աթեշյանը և ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Ավարտելով Վատիկանի Հռոմեական կաթոլիկ Եկեղեցուն տրված հայրապետական իր այցելությունը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հաջորդ օրը հովվապետական այցելությամբ մեկնեց Միլան՝ հանդիպելու տեղի հայ համայնքին և նախագահելու Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց հայոց եկեղեցու հիմնադրման հիսունամյակի հանդիսություններին:

**Տասը մայիսի** - Առավոտյան Հռոմի «Լեոնարդո Դա Վինչի» օդանավակայանից Նորին Սրբությունը և հայրապետական ջրախմբի անդամները մեկնեցին Միլան: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում սա իտալահայությանը տրված հովվապետական առաջին այցելությունն էր: Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությանը Միլանի օդանավակայանում դիմավորեցին հովվապետական այս այցելության կարգադիր հանձնախմբի անդամները գլխավորությամբ Մարո Խուդավերդյանի: Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Նորին Սրբությունը օդանավակայանից ոստիկանների պատվո պահակախմբի առաջնորդությամբ միանգամից ուղևորվեց Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցի, ուր հանդիսավորապես մուտք գործեց «Հրաշափառ»-ի արարողությամբ:

Վեստրին Հայոց Հայրապետը այցելեց Միլանի կաթոլիկ Եկեղեցու Մայր Տաճար: Ի պատիվ Նորին Սրբության Տաճարի երգչախումբը երգեց «Հրաշափառ Աստուած» սկավաձքով շարականը, երբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի:

Տաճարում տեղի ունեցած եկեղեցական արարողություններից հետո Գարեգին Բ կաթողիկոսին բարիգալստյան խոսքով դիմեց տեղի վիճակավորը, ապա պատասխան խոսք ասաց Նորին Սրբությունը՝ վերստին իր գոհունակությունը հայտնելով Վատիկան կատարած այս այցելության և երկու Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունների համար, ինչպես նաև աղոթք բարձրացրեց առ Աստված Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ծաղկման համար: Ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը՝ *«Հայոց և Հռոմեական Եկեղեցիների դարերի պատմություն ունեցող հարաբերությունները նոր զարթոնք ապրեցին 20-րդ դարի երկրորդ կեսին, հատկապես 1970 թ. Պողոս Զ Պապի հրավերով Վազգեն Վեհափառի Հռոմ այցելությունից հետո: Այդ հարաբերությունները առավել սերտացան Գարեգին Առաջինի և Հովհաննես-Պողոս Բ Պապի գահակալության շրջանում: Մեր ընտրությունից հետո մեր հոգևոր պարտքը նկատեցինք գալ Հռոմ՝ մեր սերն ու հարգանքը բերելու Հովհաննես-Պողոս Բ Պապին: Եվ մեր այս այցելության ընթացքին երեք աղոթական օրեր ապրելով և միասին աղոթելով Սրբազան Քահանայապետի հետ՝ այժմ եկել ենք Միլան՝ մասնակցելու Սրբոց Քառասնից Մանկանց Հայոց եկեղեցու հիմնադրման հիսունամյակի հանդիսություններին»:*

Ի հիշատակ այս հանդիպման Վեհափառ Հայրապետը Միլանի կարդինալին ընծայեց վարդապետական լանջախաչ: Արարողությունն ավարտվելուց հետո Վեհափառը շրջեց Եկեղեցում, ապա կեսօրին եղավ Միլանի պատմական կենտրոնի մի շարք սրբավայրերում և պատմամշակութային հաստատություններում:

Ի պատիվ Հայոց Հայրապետի երեկոյան իտալահայ համայնքի կողմից «Մարիթ» հյուրանոցում տրվեց ընթրիք, որին ներկա էին նաև Միլանի կրոնական տարբեր հարանվանությունների առաջնորդներ, ինչպես նաև Միլիթարյան միաբա-





ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱԳԵՏԸ  
ՀԻՈՒՄ ՍԱՆՏԱ ՍԵՐԻԱ ՄԱՋԻՈՐԵ ԲԱԶԻԼԻԿ ՏԱՆԱՐՈՒՄ



ԿԱԹՈՒՆԿ ԵԿԵՂԵՅՈՒ ՄԻՒԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՅՐՈՒՄ



«ՀՐԱՇԱՓԱՌՈՎ» ՄՈՒՏԶ  
ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԿ  
ՄԻԼԱՆԻ ՄՐԵՈՅ ԲԱՌԱՄՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅՈՒՄԷ

նության ընդհանուր աբբահայր Եղիա ծ. վրդ. Քիլաղայանը:

Վեհափառ Հայրապետը, իր գնահատանքը բերելով երեկոյի կազմակերպիչներին, ներկաներին և ընդհանրապես իտալահայ համայնքին, ասաց. «Միրով է, որ մարդկությունը պետք է ընթանա առ Աստված»: Իտալիա այս ուղևորությունը եռաստիճան առաքելություն է Հայոց Հայրապետի համար: Այն չի սահմանափակվում միայն Հռոմ այցելությամբ և Սրբազան Քահանայապետի հետ ողջագործմամբ: Հռոմից անմիջապես հետո ուղևորվեցինք դեպի Միլան, ուր ունենք մի բուռ հավատավոր և նվիրյալ ու ընտիր հայորդիներ, ովքեր համախմբված Եկեղեցու շուրջ և ամենայն ջանք ու հանձնառություն ստանձնած՝ փորձում են ապրել որպես արժանավոր զավակներ իրենց նախնյաց, իրենց ծնողաց, ովքեր վերապրած ցեղասպանությունը՝ կայք են հաստատել այս հողում և հույսը, հավատը իրենց հոգում ծրարած ապրել են այսօրվա տեսիլքով, որ իրենց զավակները Աստուծո տուն պետք է ունենան, շարականներ հնչեցնեն, պատարագ մատուցեն, Տիրոջ Սուրբ Մարմնի և Արյան հաղորդությունը պետք է ստանան, իրենց զավակներին կրթեն և դաստիարակեն մաշտոցյան գրով և Վարդանանց ոգով և շնչով»:

Երեկոյի ընթացքում գեղարվեստական տարբեր կատարումներով հանդես եկան տեղի հայ համայնքի ներկայացուցիչները, իսկ Միլանի հայ Եկեղեցական համայնքի կողմից Միլանի Մայր տաճարը ներկայացնող արծաթյա մի հուշանվեր հանձնվեց Վեհափառ Հայրապետին:

**Տասնմեկը մայիսի** - Առավոտյան՝ Հոգեգալստյան տոնին, Հայրապետական մեծահանդես Ս. Պատարագ մատուցվեց Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցում, որին ներկա էին մեծ թվով իտալահայեր: Վեհափառ Հայրապետը պատարագեց առընթերակցությամբ Տ. Հովնան արքեպս. Հովնանյանի և Արամ արքեպս. Աթեշյանի:

Հովնան Սրբազանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Օրհնության գիրը Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու հիսունամյակի առիթով (տե՛ս էջ 37):

Հընթացս Ս. Պատարագի Նորին Սրբությունը Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց Մարո-Միրան Խուդավերդյան ամուսնական զույգին, ապա հայրապետական իր պատգամը փոխանցեց իտալահայությանը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ**  
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ**  
**ՄԻԼԱՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ**  
**ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻՆ**

*Միրելի՛ հավատավոր հայորդիներ*

*Փառք և գոհություն ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ պարզևեց շնորհը այս տարի Հոգեգալուստը տոնելու ձեզ հետ միասին և Մեր օրհնությունը բերելու ամենքիդ՝ Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու հիմնադրման 50-ամյակի առիթով:*

*Խորհրդանշական է, որ եկեղեցու կառուցման հիսնամյակը մենք տոնախմբում*

ենք Հոգեգալստյան հիշատակումով: Տիրոջ խոստացյալ Մխիթարիչ Սուրբ Հոգու առաքմանն էին սպասում աշակերտները՝ աղոթքով համախմբված Վերնատանը: «Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով» (Գործք Բ 3-4):

Հոգեգալուստը նաև Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հիմնադրման տոնն է, քանզի Սուրբ Հոգով գորացյալ առաքյալները տարածվեցին ողջ աշխարհով մեկ, քարոզեցին Քրիստոսի Ավետարանը, հաստատեցին Եկեղեցիները, հիմնեցին քրիստոնեական առաջին համայնքները: Առաքյալներից երկուսը՝ Թադեոսը և Բարդուղիմեոսը, եկան Հայաստան, բերեցին Քրիստոսի Ավետարանի լույսը և լուսավորեցին Հայաստան աշխարհը՝ հայոց հողի վրա հաստատելով մեր Սուրբ Եկեղեցին: Այդ Եկեղեցին կերտվեց նաև հայորդյաց հոգիներից ներս, և ուր էլ որ պատմության դաժան ճակատագիրը առաջնորդեց մեր ժողովրդին, մեր ժողովուրդը գնաց ապավինած Աստծուն՝ իր հոգու մեջ կրելով լույս պատկերը իր Սուրբ Եկեղեցու, լույս պատկերը Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածնի:

Սուրբ Էջմիածնով ապրեց հայ ժողովուրդը ի սփյուռս աշխարհի, Սուրբ Էջմիածնով կերտեց և շենացրեց իր կյանքը, ինչպես ձեր հայրերը և դուք Միլանի այս օրինյալ հողի վրա: Հիսուն տարիներ առաջ ձեր հայրերը աղոթքով և լուսավոր հավատքով հիմերը դրեցին այս եկեղեցու՝ աղոթելով, որպեսզի Հայրենիքից հեռու այս հյուրընկալ հողի վրա ապաստանած հայորդիք շարունակեն առ Աստված հավատավոր ընթացքը՝ ապրելով մեր լույս հավատքին փարված, հավատարմությամբ՝ հանդեպ նախնյաց սրբազան ժառանգությունն ու ավանդները: Միրելիներ, այսօր գոհունակություն է մեզ համար տեսնել ձեզ խմբված այս եկեղեցու շուրջ, հավատքով, եկեղեցասիրությամբ ու հայրենասիրությամբ գորացած: Ձեր ջանքերով այսօր պայծառ է այս եկեղեցին, քանզի գիտակցում էք, որ ազգային-եկեղեցական ձեր կյանքը հայրենիքից հեռու այս ավերի վրա հարատև է այնքան, որքան շեն և կանգուն է այս եկեղեցին, որի կամարների ներքո ձեր բարեպաշտ հայրերի պես աղոթք էք հնչեցնում, որպեսզի միլանահայ համայնքի վրա երկնքից առատորեն հեղվի Քրիստոսի ողորմությունը: Ձեր բարի օրինակին հետևելով՝ նույն հավատքով և նվիրումով նաև ձեր զավակունք պիտի շարունակեն ապրել օրհնության մեջ, և Աստված, որ տեսնում է ձեր հավատարմությունը, բազմապատիկ պետք է պարգևատրի ձեզ Սուրբ Հոգու առատ շնորհներով:

Այսօր, ի նշանավորումն Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու հիսնամյակի, ցանկանում ենք, որպես օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ ընծայաբերել Տիրամոր այս սրբապատկերը, որի առջև նույնպես Աստվածամոր բարեխոսության հայցով ձեր աղոթքը առ Աստված պիտի բարձրացնեք՝ միշտ հավատարմության ուխտով դեպի Սուրբ Էջմիածինը, որն իր անսպառ լույսն է ճառագում աշխարհասփյուռ հայորդյաց համար:

Մենք Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում ձեր հոգևոր հովվին՝ Հոգեշնորհ Տ. Առեն վարդապետ Շահենյանին, ում հանդեպ ձեր սիրտ վկայությունը տեսանք նաև Մեր այս այցելության ընթացքին: Գոհունակություն է Հայրապետիս համար, որ մեր Եկեղեցու սպասավորը վայելում է հավատավոր իր հոտի սերն ու հարգանքը, որին արժանացել է իր բարեխիղճ և նախանձախնդիր սպասավորությամբ, բարի գործոց սերմանումով: Մենք նս, տեսնելով նրա ժրաջան աշխատանքը, նվիրումը և ծառայասիրության ոգին, ցանկանում ենք իր կուրծքը զարդարել մեր Ե-

կեղեցու վարդապետական խաչով՝ մաղթելով, որ Տերն առավել գորացնի Հայր Սուրբին իր ծառայասիրության մեջ: Մենք ցանկանում ենք նաև Մեր գնահատանքը արտահայտել միլանահայ համայնքին իրենց նվիրյալ ծառայությունը բերող Սարո և Սիրան Խուդավերդյաններին՝ նրանց շնորհելով Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը:

Այսօր՝ Հոգեգալստյան տոնին, աղոթում ենք առ Բարձրալը, որ ամենքիս հոգին առավել զարդարվի Հոգեգալստյան շնորհներով, և Տերը երկնահեղ օրհնությամբ Իր Սուրբ Աջի հովանու ներքո միշտ պահի և պահպանի Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին, միլանահայ համայնքը և աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

**Շնորհք, սէր և ողորմություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. Ամեն:**

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց եկեղեցուն կից վերանորոգյալ սրահի բացումը:

Ավարտելով Միլանի հայ համայնքին տրված հովվապետական այցելությունը՝ Նորին Սրբությունը ուղևորվեց Վենետիկ:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեքենաների շարասյունով Միլանից ճանապարհ ընկնելով՝ երեք ժամ անց հասավ Վենետիկ, ուր Նորին Սրբությանը դիմավորեց Մխիթարյան միաբանության աբբահոր փոխանորդ Հ. Մեսրոպ վրդ. Սուլախյանը և հատուկ մակույկով առաջնորդեց Սուրբ Ղազար: Երբ մակույկը երևաց Սուրբ Ղազարից, վերջին երեք հարյուրամյակներում հայոց դպրության և մշակույթի ջահակիրներից մեկը եղող այս վանքում սկսեցին ուրախությամբ դողանջել Մխիթարյան մայրավանքի եկեղեցու զանգերը՝ ազդարարելով Հայոց Հայրապետի գալուստը:

Ս. Ղազարի նավամատույցին Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասաց Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Եղիա ծ. վրդ. Քիլաղայանը:

Մխիթարյան միաբանության և հայրապետական շքախմբի անդամները, ինչպես նաև Վենետիկի և շրջակա քաղաքների հայերը կազմեցին միացյալ ծանրաշուք մի թափոր, որով Հայոց Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվեց վանքի եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ի երգեցողությամբ: Տեղի ունեցավ եկեղեցական արարողություն, որից հետո Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց միաբանության ընդհանուր աբբահայրը՝ խորին մի հուզումով ներկայացնելով, թե մխիթարյանների համար ինչ է նշանակում Ամենայն Հայոց Հայրապետի Ս. Ղազար այցելությունը՝ ի մասավորի ասելով. «Այսօր Ձեզանով Հայաստանը գտնվում է Ս. Ղազարի մեջ: Սուրբ Ղազարը մի փոքր Հայաստան է: Սրտանց շնորհակալություն նաև բոլոր Սրբազան Հայրերին, ովքեր եկան նախ Հռոմ, ապա Միլան և Ս. Ղազար: Այս եռաստիճանությունը թող լինի միության և հաշտության խորհրդանիշ, և Երրորդություն ասելով հասկանում ենք սեր, միություն և համերաշխություն»:

Այնուհետև հնչեցին հայկական հոգևոր և աշխարհիկ երգեր, որոնց կատարմանը իրենց մասնակցությունը բերեց նաև իտալացի արվեստագետներից կազմված խումբը: Գեղարվեստական այս հայտագիրն ավարտվեց Հայրապետական մաղթանքով, որը «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչունյանի բնորոշմամբ ներկաները երգեցին «աղօթքի մը երկյուղածությամբ»:

Հավաքվածներին ապա իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԽՈՍՔԸ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ  
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ**

Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում Մխիթարյան միաբանության արքահայր Հոգեշնորհ Տ. Եղիա ծայրագույն վարդապետ Քիլադայանին, միաբանության ուխտապահ անդամներին ջերմ ընդունելության համար:

Մեզ համար Բտալիա և Վատիկան այցելությունը ամբողջական պիտի չլիներ առանց Սուրբ Ղազար այցելության: Արդարև, Սուրբ Ղազարը Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու փոքր Հայաստան է, որովհետև հայ ոգին է այստեղ թևածում, մերտապաշունչ աղոթքն է այստեղ հնչում, և հայ գիրքն է այստեղ ապրում:

Մխիթարյան միաբանությունը հաստատվեց պայծառ տեսիլքով մեծանուն հայ վարդապետի՝ Մխիթար Աբբահոր, ով հնագանդությամբ հետևել է Տիրոջ առաջնորդությանը, որ բերել է նրան Հայրենիքից հազարավոր մղոններ հեռու փոքրիկ այս կղզակը, ուր իր հավատքի շնորհիվ, իրեն համախոհ վարդապետների աջակցությամբ կերտել է այս փոքր Հայաստանը՝ հայ ոգով, հայ շնչով, հայ մտքով ապրող և գործող: Աբբահոր տեսիլքին հավատարմությունը իրենց սրտերում մշտապես վառ են պահել Մխիթարյան հայրերը, ովքեր լինելով հոգևոր իշխանության ներքո Կաթոլիկ Եկեղեցու՝ նախանձախնդիր են եղել ազգային արժեքներին:

Շուրջ տասը տարիներ առաջ Մենք Սուրբ Ղազար այցելեցինք՝ երջանկահիշատակ Մեր նախորդին ուղեկցելով այս նվիրական վայրը: Այսօր մխիթարված ենք տեսնել, որ առավել պայծառաշուք է Մխիթարյան հայրերի նվիրական օթևանը, ուր թեև նվազած թվով, սակայն նույն հավատքով և նույն նվիրումով միաբանության անդամները շարունակում են Մխիթար Աբբահոր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում՝ աշխարհի առջև բարձր պահելով հայ անունը և լավագույնս ներկայացնելով մեր ժողովրդի մշակութային գանձերն ու հայ արվեստը:

Միրելիներ, Աստված թող ուժ և կարողություն պարգևի Ձեզ, որպեսզի կարողանաք պահել և պահպանել այն, ինչ որ այնքան տքնությամբ, այնքան զոհողությունների գնով և մաքառմամբ կերտել, ամբարել և ավանդ ու ժառանգություն են թողել մեր լուսավոր հայրերը: Նվիրական ու ավանդաշատ այս հաստատության մեջ թող շարունակի գորանալ հոգին հայոց, որպեսզի յուրաքանչյուր այցելու՝ այստեղ կանգնած, իր սրտում կարողանա կատարել սիրելի Աբբահոր շուրթերից ելած այն հաստատումը, թե ինքը գտնվում է Հայաստանից հեռու մի փոքր Հայաստանում:

Աստծո օրհնությունն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը ձեզ՝ սիրելի հայրեր, որպեսզի շարունակեք ի կատար ածել, ամբողջացնել և մեր հաջորդներին ավանդ թողնել Մխիթար Աբբահոր տեսիլքը՝ մարմնավորված բարի գործերում և բարի իրագործումների մեջ:

Վեհափառ Հայրապետը այնուհետև շրջեց Մխիթարյան մայրավանքում: Ծանոթացավ միաբանության կյանքին և այստեղ պահվող հայկական ձեռագրերին ու արվեստի գործերին:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՓՈՐՈՎ ՄՈՒՏԸ  
ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ Ս. ԴԱԶԱՐԻ ՄԱՅՐԱԿԱՆՔ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ս. ԴԱԶԱՐՈՒՄ



ИСТОРИЈА СРПСКЕ ЦРКВЕ

Երեկոյան ի պատիվ հայրապետական շքախմբի միաբանության կողմից ընթրիք տրվեց, որն ուղեկցվեց ազգային-հոգևոր երգերի կատարմամբ:

**12 մայիսի** – Նորին Սրբության գլխավորությամբ հայրապետական շքախմբի անդամները մասնակցեցին առավոտյան ժամերգությանը, այնուհետև եղան Ս. Ղազարի ձեռագրատանը, թանգարանում: Այա տեղի ունեցավ համատեղ խորհրդակցություն Մխիթարյան միաբանության անդամների հետ, որի ընթացքում քննարկվեց Մայր Աթոռի և Մխիթարյան միաբանության միջև կապերը առավել սերտացնելու հարցը: Վեհափառ Հայրապետը հատկապես շեշտեց միաբանությունը երիտասարդ անդամներով համալրելու կարևորությունը՝ խոսքն ավարտելով հետևյալ բարեմադրանքով. *«Թող Աստված օրհնի իրականություն առաջնորդել այն բոլոր բարի մտածումները, որ ունենք Մխիթարյան միաբանության հետ, և մենք կարողանանք միակամ, միասիրտ և միահոգի իրականացնել մեր ժողովրդի կյանքից ներս մեր հոգևոր առաքելությունը, որպես Լուսավորչի հավատարիմ զավակներ, նրա արժանավոր հետնորդներ, և մեր այս համագործակցության արդյունքում պիտի ցնծան և ուրախանան մեր ժողովրդի բոլոր զավակունք»:*

Ի հիշատակ այս այցելության Մխիթարյանները Վեհափառ Հայրապետին նվիրեցին Ալեքսանդր Մակեդոնացու վարքի շքեղ նկարագարովամբ մի ձեռագրի լուսատիպ նմանահանությամբ հրատարակությունը: Նորին Սրբությունն էլ միաբանությանը նվիրեց մի սրբանկար, ուր պատկերված էին Ս. Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Մեծը՝ պահած Սուրբ Էջմիածնի մանրակերտը, իսկ միաբանության անդամներին Վեհափառ Հայրապետը նվիրեց Ս. Էջմիածնի պատկերով մասնատուփեր:

Հրաժեշտի ընթրիքից հետո Վեհափառ Հայրապետը Ս. Ղազարից ուղևորվեց Վենետիկ, որտեղից և վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԱՐԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ԾԱՏՈՒԹՅԱՆ